# Պատմա-բանասիրական ՀԱՆԴԵՍ

## Историко-филологический журнал

1971

1915 թ. հայ ժողովրդի անհամեմատելի ողբերգությունը չափազանց ծանր է անդրադարձել Հ. Տաշյանի վրա: Որպես գիտնական-բանասերի նա այդ օրերի ահավոր եղելություններին է նվիրել մի աշխատություն[11], որտեղ գերազանցապես գերմանական փաստաթղթերի հիման վրա հստակ ու գունեղ շարադրանքով ցույց է թուրք-գերմանական համագործակցությամբ հայ ժողովրդի ենթարկված անասելի տառապանքների, սպանությունների, բռնի կրոնափոխության, աքսորի ու տարագրության պատմությունը: Նշելով Թուրքիայի անօրինակ վայրագությունները, հատկապես շեշտում է Գերմանիայի մեղսակցությունը: